# ՍՆՆԴԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ՀԱՎԱՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ

**Athens Services**-ը համագործակցում է ձեր քաղաքի հետ՝ իրականացնելու սննդի մնացորդների հավաք՝ սեփական տան բնակիչների և բազմաբնակարան համալիրների համար: Սենատի **1383** օրինագծի համաձայն՝ Կալիֆոռնիայում սեփական տան բնակիչներից և բազմաբնտանիք համալիրներից կպահանջվի իրենց կանաչ թափոնների տարայի մեջ դնել ԲՈԼՈՐ կանաչապատման թափոնները, սննդի մնացորդները և սննդով աղտոտված թուղթը **(100%** մանրաթելերի հիմքով**):**

**Ի՞ՆՉ Է ՓՈԽՎՈՒՄ:** Դուք կկարողանաք օգտագործել ձեր կանաչ օրգանական նյութերի կոնտեյները կանաչապատման թափոնների, սննդի մնացորդների և **100%** մանրաթելերի հիմքով, սննդով աղտոտված թղթի համար**:**

**ՍՆՆԴԻ ՄՆԱՑՈՐԴՆԵ՞Ր:** Այո, Athens-ը կընդունի բոլոր տեսակի սննդի մնացորդները: Մեր American Organics կոմպոստավորման գործարանը օրգանական թափոնները վերածում է սննդանյութերով հարուստ հողի հավելումների: Ստացված կոմպոստն օգտագործվում է կոմերցիոն ֆերմերների, քաղաքային նախագծերի, այգիների խանութների, կանաչապատողների և բնակիչների կողմից:

**ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ ՄԱՍՆԱԿՑԵԼ:** Խոհանոցի սննդի մնացորդները հավաքելու համար կարող եք օգտագործել շարժական, բազմակի օգտագործման տարա՝ ամուր փակվող կափարիչով: Այն կարող է լինել պլաստմասե, մետաղական կամ կերամիկական: Դույլի տարբերակները կարելի է գնել կամ դիտարկել սուրճի տարաների, յոգուրտի կամ մարգարինի մեծ դույլերի կամ հյութի սափորների օգտագործումը: Դրանք

կարելի է պահել խոհանոցի դարակներում, լվացարանի տակ, սառցախցիկում կամ որտեղ հարմար եք գտնում:

**ԻՆՉՈՒ՞ ՎԵՐԱՄՇԱԿԵԼ ՕՐԳԱՆԻԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ:** Աղբավայրերը Կալիֆոռնիայում մեթանի երրորդ ամենամեծ աղբյուրն են: Օրգանական թափոնները արտանետում են նահանգի մեթանի 20%-ը: Նվազեցնելով օրգանական նյութերը աղբավայրից՝ դուք օգնում եք պաշտպանել շրջակա միջավայրը և ապագա սերունդներին:

**ՏՈՊՐԱԿՆԵՐՆ ԸՆԴՈՒՆՎՈՒ՞Մ ԵՆ:** Ներդիր տոպրակները պարտադիր չեն: Պլաստիկ և բիոպլաստիկ «կոմպոստացվող» տոպրակներն ընդունվում են օրգանականի տարայի մեջ, բայց դրանք պետք է լինեն ԹԱՓԱՆՑԻԿ կամ կիսաթափանցիկ-կանաչ, և տոպրակի պարունակությունը պետք է տեսանելի լինի: Ընդունելի օրգանական նյութերը կմշակվեն, բայց տոպրակերը չեն վերամշակվի կամ կոմպոստացվի:

**ՈՐՏԵՂԻ՞Ց ԿԱՐՈՂ ԵՄ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼ:** Athensն այստեղ է՝ աջակցելու համ այնքին այս նոր ծրագրի հարցում, և կտրամադրի ռեսուրսներ և թրեյնինգ, որոնք կօգնեն ձեզ սկսել: Եթե օրգանական նյութերի հավաքման

նոր ծրագրի վերաբերյալ հարցեր ունեք, կարող եք դիմել Athens-ի հաճախորդների սպասարկման կենտրոն `(888) 336-6100 հեռախոսահամարով կամ այցելել՝ AthensServices.com/Food.

*Սկանավորեք՝ լրացուցիչ ռեսուրսների համար*

## ՄԱՍՆԱԿՑԵԼԸ ՇԱՏ ՀԵՇՏ Է



**1.** ԼՑՐԵՔ

Լցրեք ձեր դույլերը սննդի մնացորդներով եւ ընդունելի իրերով: (Ներդիր տոպրակը պարտադիր չէ: Դիտարկեք թերթը կամ թղթի տոպրակը: Պլաստիկ տոպրակները պետք է թափանցիկ լինեն):

**2.** ԴԱՏԱՐԿԵՔ

Դատարկեք դույլի պարունակությունը ձեր կանաչ օրգանական տարայի մեջ:



**3.** ՊԱՐԶԱՊԵՍ ԵՎ ԿՐԿՆԵՔ

Լվացեք դույլը օճառով և ջրով: Կրկին լցրեք: Թեթևակի սոդա ցանեք՝ հոտերից զերծ պահելու համար:

<u>Athens-ի խորհուրդը:</u> *Մսի և կաթնամթերքի մնացորդները պահեք տարայի մեջ՝ ձեր սառնարանում, և աղբահավաքման օրը տեղափոխեք կանաչ օրգանական տարայի մեջ:*

## ԸՆԴՈՒՆԵԼԻ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐ

### ԿԱՆԱՉ ԹԱՓՈՆ

- Կտրած ծաղիկների և թփերի մնացորդներ
- Հնձած խոտ
- Տերևներ և ճյուղեր
- Փայտանյութ, փայտի ջարդոն և նրբատախտակ (չներկված կամ չմշակված)
- Մոլախոտեր

### ՍՆՆԴԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐ

- Հաց, բրինձ և մակարոնեղեն
- Պանիր և կաթնամթերք
- Սուրճի մրուր և ֆիլտր
- Մրգեր և բանջարեղեն
- Ծաղիկներ և խոտաբույսեր
- Միս, ոսկորներ և թռչնամիս
- Ծովամթերք և փափուկ պատյանով մթերք (օմար, խեցգետին և ծովախեցգետին)
- Կենդանիների սնունդ (ոչ դեղորայքային)

### ՍՆՆԴՈՎ ԱՂՏՈՏՎԱԾ ԹՈՒՂԹ*

- Սննդով աղտոտված թուղթ
- Ձվի թղթե տուփեր
- Թղթե անձեռոցիկներ և խոհանոցային սրբիչներ
- Պիցցայի տուփեր
- Ափսեներ
- Սննդի տոփեր (առանց կափարիչի)
- Փայտե և մանրաթելերից սպասք

*Պետք է լինի 100% մանրաթելի հիմքով: Բիոպլաստիկ, մոմի կամ նավթի հիմքով պլաստմասե ծածկույթով, երևայ կամ լամինացված նյութեր ՉԻ ԿԱՐԵԼԻ:*

## ՉՆԵՐԱՌԵԼ

- Բոլոր պլաստմասաները
- Կակտուս, սուկուլենտներ և յուկա
- Կոմպոստացվող պլաստմասսա (կենսապլաստիկներ)
- Սուրճի բաժակներ և պատիճներ
- Ճարպ, ձեթ և յուղեր թափոններ
- Սննդի կպչուն պիտակներ (խնդրում ենք հեռացնել)
- Ձեռնոցներ
- Կոշտ պատյանով մթերք (կակղամորթեր, միդիա և ոստրե)
- Դեղորայք
- Արմավենու ճյուղեր
- Թղթե անձեռոցիկներ և սրբիչներ՝ քիմիական մաքրող միջոցներով
- Մազաղաթ և մոմ
- Կենդանիների թափոններ
- Քարեր և հող
- Ռետինե ժապավեններ
- Թեյի տոպրակներ
- Տեքստիլ
- Թաց և չոր անձեռոցիկներ